

Ա. ԱԽՈՒՆԴՈՎ


ՍԵՎՈՒԿ ԱՐԻԿ



894.362f
W-36

Ա. Գ. Ե. Պ. Ե. Ե. Բ.

Ծանոթագրություն, բաժին
Բազմ. — 1936



2011-07

894.36215

Q-36

Ա. Ա. Խ Ո Ւ Դ Ո Վ.

ԱՎ

ՍԵՎՈՒԿ ԱԶԻԿԸ

Թարգմանեց՝ Ա. Ա. Բենյան
Խմբագրեց Լ. ԳԱՆԻԵԼՅԱՆ

Ա. Զ Ե Ր Ն Ե Շ Ք

Ուսումնա-Մանկավարժական բաժին
Բագու—1935



ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

ԺԱՌԱ Ա. ԽՈՎԱԿԻՉ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՐ



8197-53

ՍԵՎՈՒԿ ԱԶԻԿԸ

Կովկասի քաղաքներից մեկում, վարպետ Զեյնալ անունով մի թամբագործ եր ապրում էր կնոջ Շերեֆ Նիսայի հետ։ Նրանք իրանցիներ եյին, իրանում ապրուստը շատ եր դժվար, դրա համար ել այնտեղից գաղթել ու յեկել եյին այդ քաղաքը։ Վարպետ Զեյնալը թամբեր պատրաստելով մի կերպ պահում եր իր ընտանիքը։

Վարպետ Զեյնալը՝ վեց տարեկան թութու անունով աղջկանից բացի ուրիշ յերեխա չուներ, թութուն շատ ու ու տգեղ եր։ Մայրը իր մանկիկին փայփայելիս, նրան անվանել եր «Սև Աչիկ», դրա համար ել հետագայում նրա իսկական անունը մոռացվեց և բոլորը սկսեցին նըրան կոչել Սևուկ Աչիկ։ Սևուկ Աչիկը շատ չարաձճի յեր, ինքը աղջիկ լինելով հանդերձ, աղջիկների հետ խաղալ չեր սիրում, միշտ աղա յերեխաների հետ եր խաղ անում։ Յերեխաները Սևուկ Աչիկից շատ եյին վախենում, զորովինեան նա շատ կրակուտ եր և նրա բուռնցքի հարվածներին վոչ վոք չեր դիմանում։ Սևուկ Աչիկը միշտ պաշտպանում եր թույլերին և անցնում նրանց կողմը։ Սևուկ Աչիկը շատ եր չար, մայրը նրա մասին միշտ գանգատվում եր դրացիներին ու ասում

—«Սևուկ Աչիկին վոչ ջուրը կլսեղի, վոչ ել կրակը կայրի»։

Սևուկ Աչիկը չնայած շատ չարաձճի յեր, բայց խաղի ժամանակ միշտ անցնում եր թույլերի կողմը գթոտ և ընկերասեր եր. ինչ վոր ունենար, ընկերների հետ կես կաներ։

Այն քաղաքում, ուր վարպետ Զեյնալն եր ապրում ճախ յերկրաշարժ եր լինում: Մի ձմեռ սոսկալի յերկրաշարժ յեղավ, բազմաթիվ տներ քանդվեցին ու մեծ թվով մարդիկ վլատակների տակ մնալով մահացան: Հույսը բացվելուց հետո, շրջանի մարդիկ հավաքվեցին ու քաղաքին ոգնության յեկան: Մարդիկ խումբ ճեռքներին բահ, թի և քլունգ վերցրած սկսեցին քանդել վլատակները: Մի խումբ ել քանդում եր վարպետ Զեյնալի ապրած տան վլատակը: Փլատակների տակից դուրս յեկավ Սեռուկ Աշիկի մոր Շերեֆ Նիսանի դիակը, ապա հոր՝ վարպետ Զեյնալինը: Միքիչ ել քանդելուց հետո, մի փոս բացվեց, այդ փոսից դուրս թռուվ մի փոքրիկ մերկ աղջիկ: Նա հենց ինքը Սեռուկ Աշիկն եր: Աղջիկը հենց վոր տեսավ հոր ու մոր դիակը՝ սկսեց աղի արցունք թափել: Ամենքը զբաղված եյին իրենց բարեկամները փնտրելով, վոչ վոք չհետաքրքրվեց Սեռուկ Աշիկի բաղդով:



Յերկրաշարժից մի քանի որ տուած, մի խումբ բոշաներ յեկել ու այդ քաղաքի շրջակալքում վրան եյին խփեր: Մի բոշակին Յասաման անունով խղճաց Սեռուկ Աշի-

կին, վերցրեց նրան ու տարավ իր վրանը, նստեցրեց ոջախի մոտ, կերակրեց ու հագցրեց: Յասամանը իմանալով, վոր Սեռուկ Աշիկը վորբ ե, վոչ վոք չունե, վորդեգրեց նրան:

Յասամանը քսան տարեկան, գեղեցիկ գեմքով, քաղցր բնավորությամբ և ուրախ սրտով մի կին եր: Իր լավ բնավորության համար բոլորը սիրում եյին Յասամանին. բայց նրա ամուսնուն՝ Յուսուփին վոչ վոք չեր սիրում, վորովհետև նա, սարսափելի անգութ, բռնակալ մի մարդ եր: Յասամանը դափ եր ածում յերգում ու պարում. զրանով նա բոշաների խմբին, մեծ ոգուտներ եր տալիս, իսկ ամուսինը, նը, Յուսուփն ել դռնից դուռ ման եր գալիս ու արջ պար ածում:

Եերբ Յասամանը Սեռուկ Աշիկին բերեց իրենց վրանը ամուսինը տանը չեր: Յուսուփը խմբի մի մասի հետ առավոտը շատ վաղ այլտեղից դուռս եր յեկել ու ճանապարհ ընկել: Յասամանը իր ամուսնուց շատ եր վախենում և զգիտեր, թե ամուսինը Սեռուկ Աշիկին կնդունի, թե վոչ: Այդ միտքը Յասամանին շատ եր տանջում:

Խմբից հետ մնացած բոշաներն ել ճամբա ընկան: Յասամանի մտատանջությունը անտեղի դուրս չեկավ, հենց վոր խմբի մնացած մասը յեկավ և միացավ իր ընկերներին և Յուսուփն իմացավ, վոր Յասամանը Սեռուկ Աշիկին վորդեգրել ե, խիստ բարեկացավ, ասաց թե, ճանապարհին առաջին պատահած դյուզում աղջկանը թողնելու յեւ Յասամանը շատ խնդրեց ամուսնուն, վոր այդպիսի բան չանի, բայց Յուսուփը նրան լսել անգամ չեր ուզում: Սեռուկ Աշիկը, գործի այդ ընթացքից շատ եր գոհ, նա Յուսուփից չափազանց վախենում եր և վախենալու իրավունք ել ուներ. Յուսուփի կտտաղի դեմ-



քը, ու ու գուրս պղծած աշքերը, վոչ միայն յերեխաներին այլ մինչև իսկ մեծ մարդկանց սարսափ եր աղդում, Յասամանը, ամուսնու ազահ լինելը լավ իմանա-



լով, Սևուկ Աչիկին իրենց մոտ թողնելու համար, նրան ասաց.

— Գիտես, Յուսուֆ յես ինչ եմ մտածել. յես Սևուկ Աչիկին ինձ նման յերգել ու պարել կտովորեցնեմ, նրան կդարդարեմ, նա գյուղերում ու քաղաքներում կերգի, կպարի և քեզ համար փող կաշխատի:

Յուսուֆը հավանեց այդ միտքը և համաձայնվեց վոր Սևուկ Աչիկը իրենց մոտ մնա:

* * *

Սևուկ Աչիկին շատ եր գուր գալիս բոշաների կյանքը: Նրանք, այսոր այստեղ, վաղը մի ուրիշ տեղ, ես գետի ափին, են անտառապատ սաղի փեշերին կանգ եյին առնում, վրան խփում, ոջախ պատրաստում ու կերակուր յեփում: Բոշաները սիրում եյին իրար մոտ հավաքվել, յերգել, պարել ու հեքյաթ պատմել. այդպիսի հավաքույթները Սևուկ Աչիկի համար հարսանիք եր: Սևուկ Աչիկը սկզ-

բում շատ եր վախենում, Յուսուֆի արջից, բայց հետո սովորեց ու խիստ բարեկամացավ նրա հետ: Արջն ել եր սիրում խաղալ աղջկա հետ: Յասամանը, ինչպես խոստացել եր Յուսուփին, Սևուկ Աչիկին մաքուր ու գեղեցիկ հագցրել, պարել ու յերգել եր սովորեցրել: Հանդիսականները՝ հիացմունքով ու զարմանքով դիտում եյին Սևուկ Աչիկի քաղցրալուր յերգելն ու նազանքով պարելը: Յերբ Սևուկը իր փոքրիկ դափր պարզում եր գեպի հանդիսականները, նրանք սիրով փոքրիկ դափր լցնում եյին փողերով: Դա Յասամանին շատ եր ուրախացնում: Յուսուփը չնայած վոր հավաքված փողերի համար շատ գոհ եր, թէ կը նոջից, և թէ Սևուկ Աչիկից, բայց չնորհիվ իր վատ բնավորության միշտ նեղացնում եր կնոջը, և աղջկանը ծեծում:

Սևուկ Աչիկը չափազանց համառ բնավորություն ուներ: Շնորհիվ իր այդ բնավորության ինչքան, վոր Յուսուփից ծեծ եր ուտում, դարձյալ իր չարություններից ձեռք չեր քաշում:

— Այս աժդանա արջը իմ մտրակի հարգածներից գողում ե, ամեն տեսակ խաղեր ե խաղում, իսկ այս փոքրիկ աղջկա ձեռքից յես չգիտեմ ինչ անեմ—զանդատ վում եր Յուսուփը:

Կինը՝ Յասամանը միշտ նախատում եր ամուսնուն, վոր այն ինչ կենդանու համար են գործ գնում չի կարե-ելի անել մարդու վերաբերմամբ: Յեթե կենդանուն հաստ ձիպոտ ե հարկավոր, մարդուն քաղցր վերաբերմունք, ա-նուշ խոսք:

Իսկ Յուսուփը չեր լսում կնոջը և միշտ ասում եր.

— Զե, այդ չե պատճառը, յեթե գու չլինես, յես այդ աղջկանը մոմ կղարձնեմ:


Մարդ ու կնոջ միջև տեղի ունեցող այդ խոսակցության հետեւնքը այն եր լինում, վոր Յուսուփն ել ավելի խիստ եր ծեծում Սևուկ Աչիկին: Սևուկ Աչիկը այդ տան-ջանքից աղատվելու համար շատ անգամ մտածում եր փախուստ տալ, բայց վոչ մի կերպ փախչելու հնար չեր գտնում:

* * *

Յերկու տարուց ավելի յեր, վոր Սևուկ Աշիկը ապ-
րում եր բոշաների մոտ: Նա իր յերգով և պարով հայտ-
նի յեր դարձել ամբողջ շրջանում:

* *

Ամառվա շոգ որերից մեկն եր: Արեի խանձող շո-
ղից մարդիկ, կենդանիներն ու թռչունները հով տեղ ու
զովարար ջուր եյին փնտրում: Բոշաների խումբը, մի
սարի լանջում զուլալ աղբուրի մոտ վրանները խփած հան-
գըստանում եր: Միջորեի ժամն եր: Յուսուֆը վերցրել-
եր արջն ու գնացել մոտակա գյուղը: Յասամանը գետա-
փին ջուր եր տաքացրել ու լվացք եր անում: Սևուկ Աշիկն
ել գետում լողանում եր: Գետը հոսում եր սարի լանջով,
այդ պատճառով ել, նա շատ աղմկոտ ու արագահոս եր,
բայց ջրի սակավության պատճառով Սևուկ Աշիկի հա-
մար վտանգավոր չեր: Յասամանը լվացքը վերջացրեց ու
շորերը փուեց մոտակա թփերին վորպեսզի չորանա:



Վերեկի սարերում հավանական ե հորդ անձրևներ եյին
եկել, վոր գետակը հանկարծ կատաղեց: Հեռվից լսվեց հե-
ղեղի աղմուկը Սևուկ Աշիկը ջրվեժի տակ լողանում եր:
Յասամանը հենց վոր տեսավ կատաղի հեղեղը սարի վե-
րի կողմից ահագին քարեր ու բազմաթիվ ծառերի ճյու-
ղեր իրար—խառնած, մեծ աղմկով ու ֆշոցով առաջ ե
թվաղում բոլոր ուժով գոռաց:

— Աղջիկս, շուտ արա, վախիր, հեղեղ ե գալիս:

Աշիկը, Յասամանի ձայնը լսելուն պես ջրվեժի տա-
կից դուրս յեկավ, բայց հազիվ եր մի քանի քայլ արել,
վոր հեղեղը նրան չար գեր պես ծածկեց: Յասամանը



բազեյի նման սլացավ գեպի ջուրը: Բայց հեղեղը աղ-
ջկանը մի ակնթարթում կորցրեց իր սառը ալիքների մեջ:
Քիչ հետո Աշիկի գլուխը դուրս յեկավ ջրից: Յասամանը,
ինքն ել մի քանի անգամ ջրի տակը սուզվելուց ու դուրս
գալուց հետո լողալով հասավ Սևուկ Աշիկին, բռնեց
նրա վարսերից ու արավ շալակը: Թե՛ւ Յասամանը լավ
լողորդ եր, բայց լողալ չեր կարողանում վորովհետեւ այդ

սընթաց հեղեղում, ուր ահադին քարեր ու հսկա ծառեր եյին թափալվում, լողալը հնարավոր չեր:

Բոշաները լսելով Յասամանի ողնություն աղաղկող ձայնը վաղեցին նրա մոտ գեալ քանի գնում կատղում եր: Իվերջո հեղեղը յերկուսին ել տարավ ու հասցրեց մի մեծ քարի: Սկսուկ Աշիկը Յասամանի ձեռքից բաց ընկավ ու մնաց քարի վրա. Յասամանին գեալ քշեց: Բոշաները թափեցին գետը յերկուսին ել հանեցին ջրից:



Նրանք յերկուսն ել ուշաթափ գրութան մեջ եյին: Նրանց յերեսի գույնը մեռելի գույն եր դարձել: Բոշաները յերկար չարչարփելուց հետո, յերկուսին ել ուշը բերին: Սկսուկ Աշիկի մարմինը քառերին խփելուց կապտել եր, բայց նա բոլորովին ել չեր վախենում: Խեղճ Յասամանի գույց տալով ասաց.

— ՏԵս Յասաման, ահա Սկսուկ Աշիկը, նա վողջ ե, հանգիստ կաց Յասաման, բախտը նրան ժպտացել ե:

Յասամանը նորից ուշաթափվեց, աչքերը վակվեցին: Բոշաները կապեցին Յասամանի զլիսի վերքերը և Սկսուկ Աշիկի, հետ միասին յերկուսին ել վրանը աարան, տեղ պատրաստեցին ու քնեցրին: Յերեկոյան դեմ Յուսուփը սուն վերադանին, յերբ իմացավ պատահած դեպքի մասին, շատ բարկացավ ու ասաց.

— Յես գիտեյի, վոր վլատակների տակից դուրս յեկած այդ աղջիկը, իվերջո մեր զլիսին մի չարիք ե բերելու:

Բոշաները Յուսուփին հանգստացրին նրան դուրս բերին վրանից:

Յասամանի բարեկամուհի Հյուսնիյեն, նրանց խնամելու համար մնաց վրանում:

Սկսուկ Աշիկը ամբողջ գիշերը անցկացրեց զառանցանքի ու ջերմի մեջ, նա միայն լուսաբացին կարողացավ մի քիչ հանգստանալ ու քնել: Իսկ Յասամանի դրությունը շատ ծանր եր: Նա տենդ ուներ, տաքությունը հոսել եր 40 աստիճանի:

Խեղճ Յասամանը տեսնդի սասակությունից վանդակում վակված թոշունի նման թփրտում եր: Նրա աչքերը միշտ վակված եյին: Գիշերը անձրև տեղալու պատճառով, առավոտվա ողը շատ ջինջ ու մաքուր եր: Յերեկվա դժբախտությունը առաջացնող գետակի ջուրը, այժմ ցածրացել, նախկին սահմանին եր հասեր: Նրա անուշ խոխոջը խառնվել եր թոշունների ծլվոցին ու գեղգեղանքին: Սկսուկ Աշիկի սիրելի ջրվեժը վայրում եր արեկի կարմրագույն ճառագայթների տակ: Յասամանը վերջապես բացեց աչքերը: Խեղճի լելակի նման կարմիր այտերը թառամել, հասմիկի գույն եր ստացել: Յասամանը ճանաչեց Հյուսնիյին ու նրան ասաց.

— Հյուսնիե, վհրաեղ ե Յուսուփը:

— Այստեղ ե քույրիկս, դրսումն ե, պատասխանեց Հյուսնիեն - կանչեմ նրան:

— Կանչեմ, բոլորին կանչեմ... մեռնում եմ...

— Մի վախենալ քույրիկս չես մեռնի: Այսոր վորտեղից ել վոր լինի քեզ համար բժիշկ եմ բերել տալու, ասաց Հյուսնիեն ու դուրս գնաց. չանցով մի քանի ըռպե Յուսուփը մնացած բոշաների հետ ներս մտավ: Բոշաները Յասամանին սիրտ եյին տալիս, Յասամանը նրանց ասաց.

— ԶԵ, սիրելիներս, յես մեռնում եմ... Յուսուփ ձեռքդի ինձ տնւր... Լսիր կտակս... խոսք տուր, վոր կկատարես:

Մի քիչ հանգստանալուց հետո նորից շարունակեց.

— Յուսուփ, ահա չորս տարի յե վոր յես քո կինն եմ: Մինչեւ այժմ բացի կովից, բացի հայհոյանքից ուրիշ բան չեմ տեսել: Ջանել կյանքս խավարեցրիր... ինձ հան-

դեպ հազար տեսակ բանություն, չարություն գործղիք, այդ բոլորը քեզ ներում եմ: Միայն դու յել ինձ խոսք ես տալու, վոր սրանից հետո Սևուկ Աշիկի համար սրտակից բարեկամ կլինես և նրան չես չարչարի...

Յասամանը լոեց: Վրանում լուսթյուն տիրեց: Յուսուփը առաջ յեկավ ու հանդիսավոր կերպով ասաց:

— Ընկերներիս ներկայությամբ խոսք եմ տալիս, վոր կտակի ճշտությամբ կատարեմ: Յասամանը յերշանիկ գեճքով Հյուսնիեն դառնալով ասաց.

— Քույրիկս Սևուկ Աշիկին քեզ եմ հանձնում, պահպանիր նրան Ո՞հ աչքերս մթնում են... Խեղդում են ինձ... Յուսուփ... Հուսնիյե... Սևուկ Աշիկ...

Սարսափելի գառանցանքի մեջ Յասամանը հոգին ավանդեց:

* * *

Յասամանի մահից հետո Յուսուփը մի առ ժամանակ պահեց իր խոստումը. բայց ելի սկսեց ծեծել, տանջել Սևուկ Աշիկին: Յուսուփը փող վաստակելու համար, ամեն որ առավոտ կանուխ Սևուկ Աշիկին վերցնում գնում եր և մեկել յերեկոյան շատ ուշ վերադառնում տուն: Յերեսում եր, թե խեղճ Սևուկ ինչքան եր տանջվում գաղան Յուսուփ ձեռքին:

Վերջին ժամանակներում Յուսուփը ձեռք բերած փող զինու յեր տալիս խմում, հարբում:

Յուսուփի հարբած ժամանակ Սևուկ Աշիկի վիճակը ել ավելի եր վատնում: Մի անգամ, Յուսուփն ու Աշիկը ճանապարհին պատահեցին մի խումբ յերիտասարդ ձիավորների, նրանք առաջարկեցին վոր Սևուկ պարի: Յուսուփը համաձայնվեց: Սևուկ Աշիկի ածելն ու նազանքով պար գալը մեծ հաճույք պատճառեց յերիտասարդներին: Նրանք Աշիկի գափը լցրին սկ և սպիտակ փողերով:

— Սակ ոլ, շատ ապրիս, Սևուկ Աշիկ - ասելով յերիտասարդները քշեցին իրենց ձիերը:

Յուսուփը ուրախացած, փողերը վերցրեց Աշիկից, ածեց գրպանն ու ասաց.

ՅԵկ, աղջիկս, արջի հետ այս անտառում նստիո, հանգստացիք, յես գնամ են դիմացի գյուղը հաց ու քեզ համար ել կաղին առնեմ:

Սևուկ Աշիկը բոլորովին չուրախացավ այս խոսքերից վորովինեան գ տեր, վոր Յուսուփը հարբելու յե գնում:

Նրանք ճանապարհից դուրս յեկան ու մտան անտառ: Յուսուփը մի մեծ կոճ ընտրեց, արջը այդ կոճից կապեց ու ասաց.

— Եելոք աղջիկս նստիր արջի մոտ, յես իսկույն կվերադառնամ:



Յուսուփը գնաց: Սևուկ Աշիկն ել պառկեց ծառի շվաքում և անուշ քնեց: Արջը մի վորոշ ժամանակ հանցանապատ պառկեց, հետո վեր կացավ և սկսեց վզից կախած զղթան ձիգ տալ: Կոճը չգիմացավ արջի ուժին ու պոկշից: Արջը իրեն աղատ ըզգաց, կապած տեղում մի քիչ ման յեկավ և հետո գնաց գեպի անտառի խորքը:

Յերկու ժամից ավելի յեր, վոր Յուսուփը գնացել եր գյուղ: Սևուկ աշիկը քնից դեռ չեր զարթներ: Յուսուփը

հարբած վիճակում որորվելով յեկավ, տեղ հասավ: Տեսնելով, վոր Սևուկ Աշիկը քնած է, արջն ել իր կապած տեղումը չե, վոտքով աղջկանը այնպես քացի հասցրեց, վոր խեղջը մեկեն վեր ցատկեց:

— Ասա տեսնեմ, արջը վորաեղ է, շան վորդու քած, ասա, — գոռաց Յուսուփը:

Վախից աղջկա լեզուն պապանձվեց, նա վոչինչ չկարողացավ պատասխանել:

— Մի սպասիր, թող արջը գտնեմ, քո բաժինը հետո կստանաս. — գոռաց նա: Յուսուփը ուշազրությամբ զննեց կոճղը, տեսավ վոր ջարդվել է: Գլխի ընկավ, վոր արջը չեն գողացել, այլ ինքն է փշոռել կոճղը ու փախել:

— Առաջ ընկիր, արջը անտառ է փախել, գնանք գտնենք. — ասաց նա:

Սևուկ Աշիկը դողալով ու վախվիսելով ճամբար ընկավ: Ամբողջ ճանապարհին Յուսուփը մեկ ծեծում, մեկ հայրում, վախեցնում եր Սևուկ Աշիկին և ինքն իրան մըրթմըրթում: Նրանք յերկար ժամանակ անտառում ման յեկան բայց արջը գտնել չկարողացան: Հանկարծ Աշիկի ականջին հասավ արջի գոռոցը:

— Խսիւմ ես, հորեղբայր — ասաց նա, արջի գոռոց ել լսկում

— Վոչ ինչ չեմ լսում, սուտ ես ասում:


— Տես, տես, նորից ե գոռում: Այս անգամ Յուսուփը ինքն ել լսեց արջի ձայնը:

— Ճիշտ ես ասում. — ասաց Յուսուփը, — արջի գոռոց ե:

Յերկուսն ել գնացին դեպի այն կողմը, վորտեղից լսվում եր գոռոցը: Զայնի արձագանգումից թվում եր, թե արջը մոտիկ տեղում է, բայց նա շատ հեռու յեր:

Յերկար փնտուելուց հետո՝ վերջապես արջին գտանտ Արջը իր շղթայով փաթաթվել եր մի ծառի, ճիգ եր տալիս ու գոռում: Յուսուփը արջը տեսնելուն պես, բարկությունից ու կատաղությունից մի մեծ փայտ վերցրեց ու սկսեց ծեծել արջին: Արջի գոռոցը բռնել եր վողջ անտառը: Վերջապես արջը ուժով ճիգ տվեց լըդ-

թան հանեց վզից ու կայծակի պես նետվեց Յուսուփի վրա:



Նա Յուսուփին գցեց գետին, ատամներով բռնեցնրա կոկորդից ու սկսեց խեղդել: Մի ըովե չանցավ կատաղած արջը արգեն հոշոտել եր իր տիրոջը: Սևուկ Աշիկը տեսնելով այդ բոլորը սոսկումից սկսեց փախչել: Բայց վախից իրեն կորցրած, փոխանակ դեպի ճանապարհն ընտառ գնալու, գնաց դեպի անտառի խորքը: Արջը թողնելով Յուսուփի գիակը, ընկավ Աշիկի յետեից: Տեսնելով արջին խեղջ աղջիկը նորից ամբողջ մարմնով դողաց և բոլոր ուժը հավաքած սկսեց փախչել: Քանի գնում արջը մոտենում եր Սևուկ Աշիկին: Հանկարծ Աշիկի առաջ բացվեց մի խոր ձոր: Հենց վոր Սշիկը սկսեց իջնել դեպի ձորը արջը հասավ նրա յետեից: Բայց վորոնետե արջը չի կարող զարիկայրից իջնել դրա համար ել նա ցած զլորվեց: Սևուկ Աշիկը ոգտվելով այդ առիթից իրեն մի կերպ գցեց ձորի լանջում գտնվող քարայրը: Քարայրի բերանը լայն եր, իսկ ներսը քանի զնում նեղանում

Եր՝ Արջը, մինչև ձորի տակը գլորվեց, հետո վեր կացավ
և սկսեց դեպի վեր մաղլցել:

Արջի առջեկի վոտքերը կարճ լինելու պատճառով նա,
թեև զարիվայրը լավ չի գնում, բայց զարիվերը արագ
ե բարձրանում: Արջը յեկավ ու մտավ քարայրը: Սկսուկ
Աչիկը քաշվեց այրի խորքը, իսկ արջը իր մեծության
պատճառով չկարողացավ խորքը գնալ: Մի քիչ մըթմըր-
թալուց հետո այրի բերանում պառկեց:

Սկսուկ Աչիկը վախենում եր, նույնիսկ շարժվելուց,
բայց իզուր եր վախենում վորովհետև արջի բարկու-
թյունը արգեն իջել եր, աղջկան չեր մնասի, դուցե ու-
րախ կիներ, վոր Աչիկը ապրում եւ:

* * *

Յերկու ժամից ավել կրկիներ, վոր Սկսուկ Աչիկը քա-
րայրումն եր, Խեղճ աղջկեր արջի վախից այն պես եր
կպել քարայրին վոր նույնիսկ չեր կարողանում շարժվել:
Մի կողմից այրի ծանը ոդը մյուս կողմից ել արջի
սարսափը խեղջ աղջկան հասցեր ել եյին ուշաթափության
աստիճանի: Իսկ արջը խոմքալով քնում եր, Հանկարծ
արջը արթնացավ ու սկսեց մըթմըթալ: Սկսուկ Աչիկի
ականջին բազմաթիվ շների հաջոց հասավ: Յերկար ժա-
մանակ չանցավ շները հաջալով վրա տվին դեպի այրը.
բայց սիրա չեյին անում այրը մտնելու: Քիչ հետո ձիա-
վոր վորսորդներ գոռում գոչումով մոտեցան այրին: Նկա-
տելով, վոր այրում արջ կա հրացանները պատրաստե-
ցին ու շներին թողին դեպի այրը: Շներից մի քանիսը
սիրտ առնելով մտան այրը, բայց իսկույն կողկոնձալով
հետ քաշվեցին Շներից մի յերկուսը վիրավորվել եյին:
Այդ դրության մեջ դրսից վորսորդները.

Սխզար բռնիր, Խալլու բռնիր, Գյումիշ բռնիր.—
սելով շներին վրա եյին տալիս Շները սիրտ առած, նո-
րից մտան այրը և արջի հետ կովի բռնվեցի: Միառժա-
մանակ կովելուց հետո, աջը այրից դուրս պրծափ: Եղ
բռպելին յերեք գնդակ մեկն նրա վրա սլացավ: Խեղ-



արջը գնդակների հարվածից, գետին փովեց: Վորսորդնե-
րից մեկը կանչեց.

— Կեցցե իմ գնդակը:

— Զե, Հյուսեյն Կուլի աղա, սխալվում ես, իմ գըն-
դակն սպանեց արջին ձայնեց մյուսը:

Ներեզություն Սելիմ բեկ,—ասաց յերորդը.—յես ար-
ջի գլխին ելի նշան բռնել իմ գնդակն ե սպանել նրան:

— Համբերություն, սիրելիներս, ես բռպեխս հայտնի
կլինի, ասաց առաջին խոսողը, ապա ձիուց ցած թռավ
ու ծառաների ոգնությամբ արջի դիմեկը այս կողմ, այն
կողմ շուռ տալով բացականչեց.


Սիրելիներս, անտեղի միք վիճիլ, յերեքիս գնդակն ել
կպել ու սպանել ե արջին: Հետո դիմեկով ծառաներին
հրամայեց:

Անսիջապես քերթեցեք արջի կաշին: Ռահիմ բեկ քեզ
չասացի, վոր առանց արջի այս վորսից տուն չեմ գնա-
լու. դու քո սեփական անտառը գովում ելիր ու ինձ ել
ծաղրում, թե ձեր անտառում նապաստակ ել չի լինի: Բա
սա լինչ ե:

— Հուսեյն Կուլի աղա, ես արջը անտառի արջ չի:
— Այդպիսի բան չի կարող լինելու եղ վորտեղից իմացար:
— Մի լավ տես, արջի վզի մազերը շղթայից մաշվել ե, ճիշտ չեմ ասելում Սելիմ բեկ:

Սելիմ բեկը նայեց ու հաստատեց Ռահիմ բեկի ասածը: Բեկերը քահքան ծիծաղեցին: Սկզբում Հյուսեյին կուլի աղան իր բարեկամների ասածները կատակի տեղ դրեց: Բայց հետո ինքն ել ուշադրությամբ նայելով կատածի մեջ ընկափ: Այդ ժամանակ վորսի չների հետ գտնվող սև գամփոր մտավ այրը: Նրա յետեկից գնացին և մյուս շները. ներսում դարձալ հաջոց սկսվեց: Հյուսեյին կուլի աղան նկատելով այդ ասաց:

— Կարծեմ այրում ելի արջ կա:



Բեկերը պատրաստեցին հրացանները և այրի բերանը բռնեցին: Սև գամփոր Սելիմ Աչիկի վոտքից բռնած շների արանքից քարշ տալով այրից դուրս բերեց: Բեկերը

աղջկան տեսնելով շատ զարմացան: Սև գամփոր բաց թողեց Սելիմ Աչիկին, Աչիկը անշունչ գետնին փուլեց: Բեկերը հավաքվեցին Աչիկի չորս կողմը: Նա հազիկ բացեց աչքերը, բայց չիմացավ թե ինքը վորտեղ ե գոտնվում: Հյուսեյին կուլի աղան հարցըրեց.

— Ասա տեսնեմ, աղջկիս, դու ով ես, այրում ի՞նչ եցիր անում: Սելիմ Աչիկը վոչինչ չպատասխանեց:

— Հյուսեյին կուլի աղա, ասաց Ռահիմ բեկը, ի՞նչ ես հարցնում չես տեսնո՞ւմ, վոր աղջկել դեռ ուշքի չի-կեր: Աղջկա դեմքից ու հագուստից յերկում ե, վոր նա բոշայի աղջկի ե: Մեր այսորվա վորսացած արջն ել ձեռքում պահած բոշայի արջ ե, բայց ուր ե մնացել տերը:

Սելիմ բեկը ուշադրի նայելով Սելիմ Աչիկին ասաց.

— Հա, ես աղջկանը յես տեսել եմ. հայտնի յերգող ու պարող Սելիմ Աչիկին ե, դրա տերն ել բոշա Յուսու-ֆըն ե: Յերեք ամիս սրանից առաջ վորքան փող ու նվեր խոստացա բոշային՝ բայց նա եղ աղջկան ինձ չտվեց: Հիմա լավ ե ձեռքս ընկել: Յերդվում եմ, ամեն որ մեծ խնջույք կազմակերպել և ձեզ հյուր կանչել:

— Ի՞նչ ես կարծում, յես այդ խնջույքները չեմ կարող կազմակերպել, — ասանց Հյուսեյին կուլի աղան: Յեթե ճիշտն ասենք, աղջկիկը ինձ ե պատկանում, վորովհետեւ իմ շունն ե գտել նրան:

Բեկերի միջն վեճ սկսվեց: Սելիմ բեկն ասաց.

— Հյուսեյին կուլի աղան, դու ինքդ լավ գիտես վոր կինդ, Փիրջահան խանումը բոշայի աղջկանը իր տունը չի ընդունի:

— Տան տերը յես եմ, թե նա պատասխանեց Հյուսեյին կուլի աղան.— Բայցի այդ, աղջկանը տալու յեմ Փիրջի քիշին վոր նա պահի:


Բեկերը համաձայնվեցին: Հյուսեյին կուլի աղան Սելիմ Աչիկին հանձնեց ծառաներին: Բեկերը նորից սկսեցին վորս անել. բայց չորս ժամ անտառում շրջելուց հետո, բացի մի աղջկեցից և յերկու նապաստակից ուրիշ վոչինչ չկարողացան վորսալ. դրա համար ել վորսը թողեցին ու տուն վերադառն: Ճանապարհին Սելիմ Աչիկը, գլխին

յեկածը կիսատ պուատ պատմեց բեկերին: Հյուսեյին Կուլի աղան լսելով, վոր նա անհայր, անմայր վորք եւ ասաց.

—Դա շատ լավ յեղավ, աղջկան տղիս վոչ վոք չի կարող խլել ինձանից:

* * *

Յերեկոյան դեմ Հյուսեյին Կուլի աղան, բարեկամների Ռահիմ բեկի ու Սելիմ բեկի հետ միասին հասավ իր պալատը: Շների հաջոցը, վորսորդների աղմուկը ծառաների ու նոքյարների գոռում գոչումը իրար խառնվեց. Հյուսեյին Կուլի աղայի աղջկը՝ Աղջա խանումը այդ աղմուկ-աղաղակից, առանց դաստիարակչունուց թույլտվություն խնդրելու դուրս յեղավ պալատից: Սեռուկ Աշիկն



ու Աղջա խանումը իրար հանդիպեցին: Այդ յերկու յերեխաների միջև մեծ տարբերություն կար. մեկի հայրն ու

20

մայրը իշխանազուններ եյին, իսկ մյուսինը՝ չքավոր: Մեկը տկար, անուժ, միշտ խնամքի կարոտ, իսկ մյուսը կազմվածքով պողպատի նման ամուր, վորքը հասակում շատ բան տեսած, որվա հացը սեփական աշխատանքով վաստակած մի մանուկ եր: Մեկի նայվածքը արտահայտում եր, վոր չի կարող առանց խնամակալի ապրել, իսկ մյուսինը, բոլորին պայքարի եր հրավիրում: Աղջա խանումը փափուկ ձեռքը մեկնեց Սեռուկ Աշիկին, Աշիկը իր կոշտ մատներով սեղմեց նրա ձեռքը:

Աղջա խանումը. ձեռքի այդ սեղմումից սարսափած գոռաց, վերջն ել ծիծաղեց:

Յերկար ժամանակ չանցավ, աղջիկները սկսեցին իրար հետ քաղցր զրուցել: Հյուսեյին Կուլի աղան իր սենյակում բազմած քաղցր զրույց եր անում բարեկամների հետ: Աղջա խանումի և Սեռուկ Աշիկի զրույցը յերկար չտեսեց: Փերջահան խանումը՝ Աղջա խանումի մայրը պատուհանից տեսնելով, վոր իր աղջիկը զրույցի յեւ բռնվել Սեռուկ Աշիկի հետ, շատ բարկացավ, ներքեւ վազեց ու բղավեց դաստիարակչունու վրա:

—Տիկին, դուք ձեր պարտականությունը շատ վաս եք կատարում, մի տեսեք, թե ձեր դաստիարակած աղջիկը ում հետ եւ խոսում, ում հետ եւ ուզում բարեկամնալ: Շնուտ տարեք նրան իր սենյակը: Նա այս գիշեր առանց լույսի պիտի մնա:

Դաստիարակչունին, աչքերը արցունքով լցված Աղջա խանումին տարավ իր սենյակը: Փերջահան խանումը դառնալով Սեռուկ Աշիկին ասաց—յեկ հետեկիցս—և տարավ նրան Հյուսեյին Կուլի աղայի սենյակը ու ծաղրական ձայնով հարցրեց.

—Այս իշխանազուն որիորդը վհրտեղից ես գտել: Աղջկանդ հետ ծանոթացել ե, իրար հետ շատ քաղցր զըրույց եյին անում...

Հյուսեյին Կուլի աղան, պատմեց տեղի ունեցած դեպքը և ավելացրեց:

—Փերջահան, խղճա աղջկանդ, տես, մենակությունը, ընկեր չունենալը նրան ինչ որի յեւ զցել: Թող այդ աղջ-

21

կա հետ խաղ անի, զվարձանա, թե ու թիկունքը բացվի՝ մարմինը ամրանա, քեյֆը տեղը դա։ Այդ աղջիկը բոշայի աղջիկ չե։ յեթե բոշայի աղջիկ ել լինի ի՞նչ ամոթ բան կա Խանումի մոտ միթե աղախին չի լինի, դաստիարակ-չուհին մոտն ե լինելու։ Յեթե մի վատ բան անեն նա թույլ չի տա։ Այդ խոսքերը Փերջահան խանումի վրա վոչ մի աղդեցություն չթողին։

— Դու ինձ խոսք եյիր տվել վոր աղջկանդ դաստիրա-կության հարցերին չես խառնվելու, — ասաց Փերջահան խանումը, — այժմ ի՞նչու խոսքդ չես կատարում։ Այդ աղ-ջիկը պետք ե հեռանա այստեղից։ Յեվ վոչ մի ավելորդ խոսք։

— Զե, այդ աղջիկը այստեղ ե մնալու, — գոռաց Հուսե-յին կուլի աղան։

Քեզ ասում եմ, այդ աղջիկը ես բոպեյիս այստեղից պետք ե հեռանա, յեթե վոչ յես ինքս կհեռանամ այս տնից — ասաց Փերջահան խանումը։

Սելիմ բեկը առիթից ոգտվելով ասաց.


— Իե վոր այդպես ե տվեք աղջկան յես տանեմ։

Հուսեյին կուլի աղան պատասխանեց.

— Վճէ, Սելիմ Բեկ, ինչպես վոր քեզ ասել եմ, այն-պես ել անելու յեմ։ Սեուկ Աշիկը մեր պարտիզան Փե-րի Քիշի մոտ ե մնալու։ Փերջիհան խանումն ուրախացավ։

— Այդ պայմանին յես ել եմ համաձայն։ Միայն թե Աղջա խանումի հետ վոչ մի կապ չունենա, վորովհետև աղջկանս վատ բաներ կսովորեցնի։

Այդպես ել արին, Սեուկ Աշիկին տարան և հանձնեցին Փերի քիշին։



Փերի քիշի խրճիթը գտնվում եր բեկի ըն-դարձակ այգում։ Նա 70 տարեկան մի ծերունի յեր։ Վոչ վոք չուներ, ինքն ել Հուսեյին կուլի աղայի ճորտը լինելով իր հոր կենդանության

որից բեկի այգում այգեպան եր։ Փերի քիշին միշտ ապ-րում եր այգում։

Ծառաները վախենում եյին Հյուսեյին կուլի աղայից ու գողում նրա առաջ։ Բայց Փերի քիշին վոչվոքից չեր վախենում, վորքան կարողանում եր, ծառաներին պաշտպանում եր աղաների բռնությունից։ Դրա համար ել ծառաները սիրում եյին ծերուկին։ Յերբ Սեուկ Աշիկին հանձնեցին նրան պահելու, նա շատ ուրախացավ։ Իր սեփական լրձիթում Աշիկի համար հատուկ տեղ պատրաստեց։ Նրան կերակրեց ու պարկեցրեց։ Սեուկ Աշիկը պառկելուց հետո յերկար ժամանակ չկարողացավ քնել։ Շատ մտածելուց՝ հետո Փերի քեշուն հարցրեց։

— Պապի, եդ խանումը, ի՞նչու թույլ չի տալիս, վոր իր աղջիկը ինձ հետ խոսի ու խաղա։


— Աղջիկս, — պատասխանեց Փերի քիշին։ Նրանք բե-կեր են, մենք ճորտեր, նրանք աղաներ են, իսկ մենք՝ ծառաներ։ Նրանց և մեր մեջ ի՞նչ բարեկամություն կա-րող ե լինել Աղջիկս, դու մոռացիր Աղջա խանումին։ Նա, քեզ ընկեր լինել չի կարող։

Սեվուկ Աշիկը մտածմունքի մեջ ընկավ։

— Ախը ի՞նչ եմ արել Աղջա խանումին, վոր մայրը բարկացել ե ինձ վրա։ Այս գիշեր նրան ճաշ չեն տալու խեղջը սոված ու մնալու։ Յերբ մայրիկս վողջ եր, յեթե յես չարություններ եյի անում ինձ ճաշից զրկում եր։ Բայց չե վոր նա վոչինչ չի արել։

Աշիկը վոչ մի յեղակացության չեկավ ու այդ մտքե-րի մեջ ել քնեց։ Այդ գիշեր նույն մտքերը Աղջա խանու-մին ել հանգիստ չեյին տա-լիս։ Վճէ մոր ե վոչ ել դաս-տիարակչուհու տված խրատ-ները ըմբռնել չեր կարողա-նում։

Ի՞նչու յես այդ աղջկա հետ խաղաւ չեմ կարող. ի՞նչ կա վոր յես բեկի աղջիկ եմ։



Սեռուկ Աչիկը շատ հետաքրքիո բաներ եր պատմում։ Նա խոստացավ, ինձ դափ թակել ու պարել սովորեցներ։ ԱՇԻ ԲՆՀՈՒ մայրս շմողեց, վոր նրա հետ յերկար խոսելի։ ԻՆ-
ՉՈՒ ինձ մթնում թողեցին։

Աղջա խանումը գերմակը զլիսին բաշեց, լաց յեղակ
ու այդպես ել քնեց։

* * *

Փերի քիշին, մանկությունից սովորել եր դեռ արել
դուրս չեկած՝ անկողնից վեր կենալ։ Նույն որը դար-
ձալ շուտ փեր կացափ կրակ վառեց ծխից սեացած թե-
յամանը ջրով լցրեց կրակի վրա դրեց և գնաց դեպի այ-
դին։ Փերի քիշին շատ եր սիրում իր մշակած այգին։
Սյուռ ծառերը ինքն եր աճեցրել. այդ շրջանում բուս-
նող ամեն տեսակ պտղատու ծառեր դուք գանեյիք այդ
այգում։ Հյուսեյին Կուլի աղայի այդ այ ին շրջանի կալ-
վածատերերի մեջ մեծ համբավ ուներ։ Յեվ յերբ Հյու-
սեյին Կուլի աղայի մոտ հյուրեր եյին դալիս, նա այգին
եր տանում նրանց ման ածելու։

Գողերից այգին պաշտպանելու համար, Փերի քիշին
միայն մի ողնական ուներ, այդ ողնականը, Սեռուկ Աչի-
կին քարայրից դուրս բերող սև գամփոն եր։ Սև գամ-
փոն չափազանց սարսափելի և շատ խելոք մի շուն եր։
Շան վախից վոչվոք չեր կարող մտնել այգին։ Ա, դ շունը
զարմանալի բնազդ ուներ։ Յերբ Փերի քիշին մի նոր
մարդու հետ ծանոթանար սև գամփոն ել մոտենում եր
նորեկին և սկսում եր պոչը շարժել, իսկ յեթե նորեկը
Փերի քիշուն թշնամի յեր դուրս գալիս՝ ապա շունը
անմիջա պես իր ատամներն եր ցույց տալիս։ Փերի քի-
շին շատ անգամ եր փորձել շան այդ բնազդը, դրա հա-
մար ել միշտ ասում եր։

— Բարեկամներիս ու թշնամիներիս սև գամփոնի մի-
ջոցով եմ ճանաչում։

Փերի քիշին, վոչ մի անգամ սև գամփոնին շղթայով
չեր կապում։ Գիշեր ու ցերեկ սև գամփոն աղատ ման
եր գալիս Դրա համար ել շունը այգուց չեր հեռանում։

24

Յեթե Հյուսեյին Կուլի աղան վորսի յեր գնում, նա յել
ուրախացած ընկերանում եր վորսի չներին։

Փերի քիշին խրճիթից դուրս գնալիս դուռը բաց եր
թողել, սև գամփոնը դուռը բաց տեսնելով ներս մտավ ու
նկատելով, վոր այստեղ ոտար մարդ կա քնած, վրա պըր-
ծափ ու սկսեց հաշել բայց յերբ ճանաչեց Աչիկին ըսկ-
ծափ պոչը շարժել։ Սեռուկ Աչիկը քնաթաթախ, վախից
սկսեց զուգուալ։ Աղջկա ձայնից Փերի քիշին անմիջա-
պես ներս մտավ ու զարմացած հարցրեց։

— Աղջիկս ինչու յես զուգուալ, ումնից ես վախե-
նում։

— Պապի, այստեղ արջ կա, — պատասխանեց Աչիկը։

— Զե, աղջիկս սև գամփոն ե, մի վախենար, այստեղ
արջը ինչ զործ ունի, Քնիր աղջիկս. դեռ շուտ ե. — ա-
սաց Փերի քիշին։

— Զե, Պապի, ել քունս չի տանում, յես միշտ շուտ
եմ վեր կենում, պատասխանեց Սեռուկ Աչիկը։

— Շատ լավ ես անում աղջիկս, մարդ պետք ե առա-
վոտը վաղ վերկենա, վոր մարմինը ամուր և առողջ լինի։
Սեռուկ Աչիկը շորերը հագավ։

— Պապի յերեսս վնր տեղ լվանամ։

— Այ, խրճիթի կողքից չուր ե գնում, գնա այստեղ
լվացվիր։

Սեռուկ Աչիկը գնաց յերեսս լվանալու։ Փերի քիշին
ել, սեղան պատրաստեց պանիր, հաց և յուղ հանեց,
հեան յել թեյամանից յերկու բաժակ թեյ ածեց։ Սեռուկ
Աչիկը յերեսս լվացած ներս մտավ։

Յերկուսն ել սկսեցին ուտել և թեյ խմել։
Թեյից հետո Փերի քիշին Սեռուկ Աչիկին ասաց.

— Վերկաց աղջիկս, քանի դեռ արել չի տաքացել
գնանք, թե այգին ման գանք, և թե սողաների համար
ատուլ քաղենք։ Փերի քիշին մի մեծ քթոց վերցրեց,
Աչիկին ել մի զամբյուղ տվեց, ու ճամբա ընկան. սև
գամփոն ել միացավ նրանց։ Նա պոչը շարժելով մոտե-
գամփոն գալիս Աչիկին։ Աչիկը գամփոնի գլուխը շոյեց և
ցավ Սեռուկ Աչիկին։ Աչիկը գամփոնը գլուխը թափ
գամբյուղը զցեց նրա վզով։ Սեվ գամփոնը գլուխը թափ

25

տվեց ու զամբյուղը վեր դցեց գետին, Աչիկը նորից դցեց, գամփուը կրկին վեր դցեց գետին, Փերի քիշին տեսնելով այդ ասաց,

— Աղջիկս, մի չարչարիկիր, սև գամփուը, սովորել ե ազատ ման գալ, նա այդպիսի բաների սովոր չե:

— Զե, պապի կվարժվի, դու մի տես, յես նրան վոնց կը սովորեցնեմ. — պատասխանեց Սևուկ աչիկը ու նստելով սև գամբոի առջև, սկսեց շոյել նրա գլուխը:

— Սև գամփուս, խելոք շունս, պահիր զամբյուղը, — Եյս ասելով զամբյուղը դարձյալ դցեց նրա վզովը: Եյս անգամ սև գամփուը զամբյուղը պահեց վզին և ուրախ ուրախ վաղ տվեց Սևուկ Աչիկի հետեից:



— Կեցցես, սև գամփուս, տեսնում ես պապի:

— Տեսնում եմ աղջիկս, և շատ ել զարմանում եմ, մինչեւ հիմա սև գամբոը բացի ինձնից ուրիշին չեր հնագանդվել: Իսկ այժմ, նույնիսկ զամբյուղը ել ե կրում:

— Դեռ դա ի՞նչ ե, վոր պապի, սպասիր, տես թե նրան ի՞նչեր եմ սովորեցնելու: Յերբ յես բոշաների խըժ-քումն եյի, տեսել եմ թե ինչպիս արջին, կապիկին, շոյե-

լով սովորեցը են, յեթե վոչ, ծեծելով բան չի դուրս գալ, բայց վախեցնելը մաս չունի: Տեսար Յուսուֆը արջին ծեծեց, ինչպես վերջինս նրան հոշոտեց: Փերի քիշին աղջկա հետ պատահած դեպքը համառոտակի լսել եր: Սևուկ Աչիկը պատմել եր գլուխի յեկած ամբողջ դըժ-բախտությունը, Գթասիրտ Փերի քիշին լսելով այդ բո-լորը շատ վշտացավ և յերդվեց, վոր այսունետև ել ավե-լի յե սիրելու վորբ աղջկանը:

Սոսափույան զով ողը, ծառերի պտուղների անուշ բուրմունքը, թուչունների յերգը մարդու հոգին փառա-վորում եյին: Սյդպիսի բնության ծոցում ապրած Փերի քիշին նայելիս՝ մարդ չեր հավատում, թե նա 70 տարե-կան եւ:

* * *

Նրանք յեկան ու կանգ առան խնձորենիների մոտ: Կարմիր հոտավետ խնձորները տեսնելով՝ Սևուկ Աչիկի աչքերը փայլեցին:

— Պապի, ի՞նչ գեղեցիկ խնձորներ են:

— Աղջիկս, մեր այգում ամեն տեսակ պտուղ կա, կեր ինչքան քեփդ տալիս ե, չեմ արգելու եմ, միայն թե սոված փորով չուտես, կիվանդանաս: Հիմի դու բարձրա-ցիր ծառը, բաղիր խնձորները, յես ել քթոցը լցնեմ:

Սևուկ Աչիկն ամիջապես մագլցեց ծառը, սկսեց քա-ղել խնձորները ու ցած գցել Քիչ հետո, Փերի քիշին ասեց.

— Աղջիկս բավական ե, ցած արի, գնանք մի քիչ ել տանձ քաղենք:

Սևուկ Աչիկը ծառից ցած իջավ, զամբյուղի մեջ մի քանի խնձոր գրեց ու կախեց գամփուի վզից: Գամփուը հանկարծ զամբյուղը վզիցը ցած գցեց ու կայծակի նսման առաջ նետվեց, Սչիկը թափված խնձորները հա-վաքելիս տեսավ, վոր գամփուը մի փոքրիկ կատվի հետե-վից ընկած ուզում ե բռնել նրան Աչիկը կանչեց գամփ-ից բայց, վորքան ել աղջիկը գոռգոռաց, գամփուը ոխն: Բայց, վորքան ել աղջիկը գոռգոռաց, գամփուը կատվից ձեռք չըաշեց: Փերի քիշին ել կանչեց շանը՝

նրան ել չմսեց. քիչեր մնացել, վոր գամփոը համեր ու բռներ կատվին. կատուն հանկարծ ցատկեց ու բարձրացավ տանձի ծառը և այդպիսով հոգին ազատեց կատաղած շան ձեռքից: Սեռուկ Աշիկը այս տեսարանից շատ ուրախացավ և ձեռքերը իրար խփելով քահ, քահ ծիծաղ եց ու ասաց.

— Դըզզ, սև գամփո, դըզզ. ի՞նչպես ես կարողացա՞ր բռնել.—

Սեվ գամփոը տեսնելով, վոր դունչը կատվին չի հասնում, ծառի տակին նստեց, այնպիսի հաջոց բարձրացրեց, վոր կարծես, թե իր ձայնի ուժով ուղղում եր կատվին վախեցնել ու ծառից ցած բերել, Խեղճ փիսոն, թեև ծառի վրա շատ բարձրում եր նստել, բայց դողում եր, աչքը չեր հեռացնում սև գամփոից: Սեռուկ Աշիկը մոտեցավ ծառին և սկսեց մաղլցել դեպի վեր: Փիսոն, աղջկան տեսավ, բայց նստած տեղից չշարժվեց: Սեռուկ Աշիկին շատ դուը յեկավ չալդիկ ու սիրունիկ փիսոն:

— Պապի տես, ի՞նչ սիրունիկ կատվի ձադ ե, սրան պետք ե տանեմ մեր տուն ու պահեմ, — ասաց Սեռուկ Աշիկը ցույց տալով կատվի ձադը Փերի քիշուն:

— Շատ լավ, աղջիկս, բայց եդ տանձերը քաղիր, հետո ցած իջիր.—Սեռուկ Աշիկը տանձերը քաղեց, փիսոն գիրկն առավ ու ցած իջավ ծառից: Սեվ գամփոը սկզբում իրեն մի քիչ անհանգիստ պահեց, հետո Սեռուկ Աշիկի շանքերի շնորհիվ, բավականին հանգստացավ և նույն իսկ փիսիկի հետ բարեկամացավ: Յերբ պառողները արդեն քթոցում դարսված պատրաստ եյին՝ Փերի քիշին Աշիկին ասաց.

— Այժմ մրգերը աղաներին տանելու ժամանակն ե, աղջիկս մինչև դուռը ինձ ոգնիր, հետո յես ինքս կտանեմ:

— Պապի, ուրեմն յես աղաների մոտ չեմ կարող գնալ:

— Զե՞ աղջիկս, յեթե գնաս Փերջահան խանումին դուք չի գա, այնպես կկարծի, թե իր հրամանին չենք հսազանդվում:

Սեռուկ Աշիկը Փերի քիշուն ճանապար դրեց մինչեւ այդու դուռը, հետո իր չալդիկ փիսոն գրկած սկսեց այդում մանգալ: Յանկապատի մոտով անցնելիս տեսավ, վոր Աղջա խանումը իր գաստիարակչուհու հետ աթոռի վրա նստած՝ գիրք և կարդում: Յերեսում եր, վոր Աղջա խանումը գիրքը ուշադրությամբ չեր կարգում և կարդացածն ել նրան դուր չեր գալիս: Այդ մոմենտին, մի սիրուն թիթեռ յեկավ ու նստեց Աղջա խանումի աթոռի գլխին:

Աղջա խանումը, ուզեց գաղտագողի բռնել թիթեռը, բայց չկարողացավ: Գաստիարակչուհին նկատելով այդ, բայց նեղացավ ու բարկացած բռնեց Աղջա խանումի ձեռշատ նեղացավ և տուն տարավ: Սեռուկ Աշիկը ցանկապատի մոտ քից և յերկար սպասում եր, վոր տեսնի արդյոք, Աղջա խանումը գարձյալ այգի կտա, թե վոչ: Քիչ հետո դաստիարակչուհին յեկավ, նստեց աթոռի վրա ու սկսեց գիրք կարծուհին յեկավ, նստեց աթոռի վրա ու սկսեց գիրք կարծուհին յեկավ, վոր նա Աղջա խանումին տուն դար: Աշիկը հասկացավ, վոր նա Աղջա խանումին տուն եր տարել ու բանտարկել: Գթամիրտ Սեռուկ Աշիկը այդ գեպից վորքան վոր խղճաց Աղջա խանումին, այնքան ել զզվանք գդաց գեպի դաստիարակչուհին:

Կալվածատիրոջ տունը, նոր ձեռվ շինված յերկնարկանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր: Պալատից մի կանի, մեծ ու ընդարձակ մի պալատ եր:

միշտ մուլթն եր լինում։ Այս սենյակը կալվածատիրոջ բնակարանում հայտնի յեր „պապի սենյակ“ անունով, Յերբ Աղջա խանումին խրատելու համար ուզում եյին պատժել գցում եյին այդ սենյակը։

Սեփուկ Աչիկը յերբ ցանկապատի յերկարությամբ գը-նում եր, նկատեց մեր նկարագրած „պապի սենյակ“-ը։ Պատուհանի կապույտ, կանաչ, կարմիր, գեղին և այլ գույշնի ապակիները Աչիկի ուշադրությունը գրավեցին։ Ցանկապատը բարձր լինելու պատճառով Աչիկը այդ սենյակի ներսը չեր կարողանում լավ տեսնել, զրա համար ել, նա բարձրացավ ծառի վրա։ Աղջա խանումը ներսից նկատեց Աչիկին և սկսեց մատներով ապակիները թղթխկացնել, վոր իմաց տա, թե ինքն այդ տեղ ե, հանկարծ ապակին ջարդվեց ու մեծ աղմուկով գետին թափվեց։ Աղմուկից յերկուսն ել կախեցան։

Սեուկ Աչիկը, թագնվեց խիտ տերեների արանքում։ Մի քիչ հետո՝ Աղջա խանումը ապակու ջարդված տեղից գլուխը դուրս հանելով՝ կամաց ձայնով կանչեց Սեուկ Աչիկին, Աչիկը մոտեցավ և հարցրեց։

— Աղջա Խանում, քեզ այդտեղ դաստիարակչուհիդ ե բանտարկել

— Այն, դու վորաեղից գիտես։

— Քիչ առաջ ցանկապատից նայում եյի, դու ծաղ. կանոցում դիրք եյիր կարդում, ուզեցիր թիթեռնիկը բռնել, դաստիարակչուհիդ քեզ վրա բարկացավ ու հիմա յերեվի բանտարկել ե քեզ։

